*Ժառ. վարժ.ի (1882-87), ուսուցիչ և կառավարիչ նոյն վարժ.ի մէջ. (1887-89). Զռ. 1889 ին, կը վախճանի Խարբերդի մէջ 1890 ին։*

*ՂՈՒԿԱՍ ՎՐԴ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ (Խանկեան) ԲԱԼՈՒՑԻ.—Մբ. Ծ. 1804 ին, աւազանի անունը Գաբրիէլ. միաբան կ'արձանագրուի 1835 ին. Զռ. 1842 ին. Կնիքը 1842. Ա.ռ. Կիպրոսի (1866-69), դարպասընկալ (1870-74). դրամընկալ դարպասի (1874-77). չինուածապետ (1877-78). ՏԲ. (1878-79). վարած է նաև Լուսահանուրեան և ժողովականութեան պաշտօնները, կը վախճանի 1888 ին։ Ցիչատակ կը թողու բումելիի երկաթոնղուոյ երեք արժէքուղթեր և մթերանոց մը Բեթղէհէմի մէջ։*

*ՂՈՒԿԱՍ ՎՐԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ՈՐՏՎԱՆՑԻ (Տիգրանակերտի արեւմտեան կողմը).—Մբ. Ծ. 1844 ին. Զռ. 1898 ին. ՏՌ. (1909-1923), կը վախճանի 1923 Յուլիս 12 ին։ Ցիչատակ կը թողու մթերանոց մը Երուսաղէմի մէջ։*

*ՂՈՒԿԱՍ ՔՀ. ԲՍՏԱՑԻ (Բուս կամ Բիս Գողթն գաւառ).—1708ին Սգուլիսցի Փիլիպպոս քհ.ին և ուրիշներու հետ ուխտաւորութեամբ կուգայ Ս. Յակոբի վանքը. (ԲԲ. Հատ. Ա. էջ 432)։*

*ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ՎՐԴ.—Մբ. Ս. Էջմիածնի, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, ուր կը մնայ երկու տարի (1785-87). կ'ընդօրինակէ 1786ին Մխիթար Սասնեցւոյ (ԺԴ դար) Ծե. ճառերը. (Հա. 1899, էջ 379)։*